ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

թիվ 385
10 սեպտեմբերի 2021թ.

Հարգելի պարոն Սահակյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 06-ին կայացած թիվ 07 հերթական նիստի որոշումները էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 13 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Շողիկ Ղազարյան
Հեռախոս՝ (093) 63-19-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2021 թվականի N 88-Ա

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 07 հերթական նիստի օրակարգը.

1. Մրգաշեն համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 09-ի թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
2. Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ) հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագիրը շարունակելու մասին:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ. Ասատրյան	/	/	
Զ. Արամյան	/	/	
Մ. Խաչատրյան	/	/	
Դ. Հակոբյան	/	/	
Գ. Մուրադյան	/	/	
Դ.Նիկողոսյան	/	/	
Մ. Վարդանյան	/	/	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2021 թվականի N 89-Ա

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 09-Ի ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Մրգաշեն համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 09-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» թիվ 49-Ա որոշման 1-ին մասում <<Գևորգ Խաչիկի Երեմյանին>> բառերից հետո լրացնել << և Մարիամ Հոկտեմբերիկի Ոսկանյան>> բառերը, իսկ 2-րդ մասում <<0.51հա>> թիվը փոխարինել <<0.5849հա>> թվով:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ.Ասատրյան	/		
Զ.Արամյան	/		
Մ.Խաչատրյան	/		
Դ. Հակոբյան	/		
Գ. Մուրադյան	/		
Դ.Նիկողոսյան	/		
Մ. Վարդանյան	/		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2021 թվականի N 90-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ) ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմնադրել Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի «Մարզամշակույթի տուն» ՀՈԱԿ:

2. Հաստատել՝

1) Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի «Մարզամշակույթի տուն» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2) Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի «Մարզամշակույթի տուն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

3. «Մարզամշակույթի տան» առջև դրված կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով հաստատությանը սեփականության իրավունքով անժամկետ հատկացնել անշարժ գույք 1273.8քմ:

4. Սույն որոշմամբ հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված ժամկետում ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցումը իրականացնող մարմնի կողմից:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ.Ասատրյան	/	/	
Զ.Արամյան	/	/	
Մ.Խաչատրյան	/	/	
Դ. Հակոբյան	/	/	
Գ. Մուրադյան	/	/	
Դ.Նիկողոսյան	/	/	
Մ. Վարդանյան	/	/	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կազմված է «06» սեպտեմբերի 2021թ
Բաղկացած է ___թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Հաստատված է համայնքի ավագանու
«06» սեպտեմբերի 2021թ
թիվ 90-Ա որոշմամբ
Համայնքի ղեկավար՝
_____ Վ. Պողոսյան
«06» _____ 2021թ.

Կազմված է «--» ---------- 2021թ
Բաղկացած է___ թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Գրանցված է ՀՀ իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
Գրանցման N_____
Գրանցման օրը՝ « » _____ 2021թ
Աշխատակից՝ _____
« » _____2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

2021թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի մարզամշակույթի տունն՝ այսուհետ մարզամշակույի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է մարզամշակույթային ծրագրեր բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի մարզամշակույթի տան խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականությունները:
2. Մարզամշակույթի տունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Մարզամշակույթի տան գտնվելու վայրն է ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքը:
4. Մարզամշակույթի տունն, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով: Մարզամշակույթի տունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ կրող պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Մարզամշակույթի տունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատական միջոցներ:
6. Մարզամշակույթի տունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Մարզամշակույթի տունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Մարզամշակույթի տունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Մարզամշակույթի տանը չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Մարզամշակույթի տան գործունեության նպատակն է երեխաներին տալ համակողմանի, հայեցի և գեղագիտական դաստիարակություն, սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում՝ հաշվի առնելով նրանց գեղագիտական, ֆիզիկական ընդունակությունները և կարողությունները:
11. Մարզամշակույթի տան կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Մարզամշակույթի տունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առաջնության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով

հաղորդակցվելը, բեմական խոսքին հաղորդակից լինելը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը: Մշակույթի տան մեջ ներառում է պարարվեստի, նկարչության, մակրամեի, խոհարարության, ասմունքի, գորգագործության ոլորտները:

13. Մարզամշակույթի տան գործողությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Մարզամշակույթի տունը պատասխանատու է պետական չափորոշիչներին ու պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:
15. Մարզամշակույթի տունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Մարզամշակույթի տան երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
17. Մարզամշակույթի տուն ընդունվում են առանց տարիքային սահմանափակման՝ ըստ ընտրության:
18. Մարզամշակույթի տան ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների և ժամանակացույցին համապատասխան, որոնք հաստատում են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կողմից:
19. Մարզամշակույթի տանը կարող են գործել վճարովի խմբակներ, նաև սիրողական խմբակներ: Ուսուցումը կատարվում է սահմանված պայմնագրի համաձայն, որտեղ սահմանվում են ուսումնական ծրագրերի ձևը, ժամկետները, ավարտական վկայականների տեսակը, ուսման վարձավճարը:
20. Մարզամշակույթի տան աշակերտների ուսման վարձը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ:

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Մարզամշակույթի տան աշակերտության համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա հունվարի տասից և ավարտվում դեկտեմբերի երեսունին:
22. Մարզամշակույթի տան մանկավարժական կազմի համար աշխատանքային ժամանակահատված է ընտրվում ընթացիկ տարվա հունվարի տասից մինչև դեկտեմբերի երեսունը: Ուսման ընթացքում արգելվում է սովորողներին ընդգրկել ուսումնական գործընթացի հետ չառնչվող տարբեր տեսակի աշխատանքաների և միջոցառումների մեջ:
23. Մարզամշակույթի տան ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմնական ձևերն են՝
    - Անհատական և խմբակային պարապմունքներ/դաս/: Անհատական դասի տևողությունը հաստատված է 45 րոպե, խմբկային դասի տևողությունը՝ 40 րոպե:
    - Աշակերտի ինքնուրույն /տնային/ աշխատանք:
    - Աշակերտի քննական և համերգային ելույթներ /երաժշտական և պարարվեստի բաժնում/:
    - Աշակերտների ինքնուրույն աշխատանքների ցուցահանդեսներ, ամառային պրակտիկա գեղարվեստի բաժիններում:
    - Ավարտական քննությունների անցկացման ժամկետը որոշում է մարզամշակույթի կենտրոնի խորհուրդը՝տեղեկացնելով ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության համապատասխան բաժնին:
24. Մարզամշակույթի տան շրջանավարտները ավարտական քննությունները հանձնելու դեպքում ստանում են պետական նմուշի ավարտական վկայականներ:
25. Հիվանդության և այլ հարգելի պատճառներով ավարտական քննություններին չմասնակցելու դեպքում շրջանավարտները կարող են ստանալ ավարտական վկայական ուսումնական տարվա առաջադիմությամբ՝ ամփոփիչ գնահատականների ցուցանիշով:
26. Ավարտական քննություններին անհարգելի պատճառով չներկայացողը կամ անբավարար գնահատականներ ստացած աշակերտները ստանում են համապատասխան տեղեկանք:

ԿՐԹԱԴԱՍԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

27. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են՝ ծնողները /օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:
28. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

29. Հաստատության և ծնողների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են նրաց միջև կնքված պայմանագրով:
30. Երեխայի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության և երեխաների իրավունքների հանդեպ հարգանքի հիման վրա:
31. Մարզամշակույթի տանը աշխատանքի են ընդունվում այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որոկավորման բնութագիր պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտա-մանկավարժական որոկավորում:
32. Մարզամշակույթի տան աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները ու արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
33. Մարզամշակույթի տան աշխատողները իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

34. Մարզամշակույթի տան կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը:
35. Մարզամշակույթի տան հիմնադիրն ունի հաստատության գործունությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
36. Մրգաշեն համայնքի մարզամշակույթի տան հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
    - ավագանու համաձայնությամբ՝ հաստատության հիմնադրումը,
    - մշակույթի տան գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
    - մշակույթի տան սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
    - մշակույթի տան կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
    - մշակույթի տան կառավարման համակարգի սահմանումը,
    - մշակույթի տան վերակազմակերպումը և լուծարումը,
    - մշակույթի տան լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:
37. Մարզամշակույթի տունը ստեղծված է հիմադրի կողմից և գրանցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
38. Մարզամշակույթի տան հիմնադիրը Մրգաշեն համայնքն է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմինների:
39. Մարզամշակույթի տան տնօրենը՝

- գործում է հաստատության անունից, ներկայացնում է այն բոլոր հաստատություններում և կազմակերպություններում,
- տնօրինում է հաստատության գույքը՝ հաստատության և հիմնադրի միջև կնքած պայմանագրի համաձայն,
- տալիս է լիազորագրեր,
- բացում է հաշիվ բանկային և այլ վարկային կազմակերպություններում,
- իրականացնում է կադրերի նշանակումն ու տեղաբաշխումը, խրախուսում է հաստատության աշխատողներին, կիրառում է տույժեր, ազատում աշխատանքից,
- պատասխանատվություն է կրում հաստատության գործունեության համար,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
- ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- կազմում է հաստատության հաստիքային ցուցակը և ծախսերի նախահաշիվը ու դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը,
- իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը,
- ապահովում և վերահսկում է տիպային ծրագրերի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը,
- պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար,
- Ուսումնասիրում է աշխատողների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն:

40. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

ՄԱՐԶԱՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

41. Մարզամշակույթի տան սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
42. Մարզամշակույթի տունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
43. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից մնացած գույքի:

44. Մարզամշակույթի տան սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
45. Մարզամշակույթի տան սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
46. Հիմադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրագրված գույքը:
47. Մարզամշակույթի տունն իրավունք չունի ամրագրված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Մարզամշակույթի տունն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրագրված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն է: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
48. Մարզամշակույթի տունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
49. Մարզամշակույթի տունը ֆինանսավորում է հիմադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
50. Մարզամշակույթի տան ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
    - Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները,
    - Բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների և քաղաքացիների նվիրատվությունները,
    - ՀՀ օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործողություններից ստացված միջոցներ:
51. Մարզամշակույթի տան գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթական է աուդիտի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

52. Մարզամշակույթի տունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված

Մրգաշեն համայնքի ավագանու

2021 թվականի սեպտեմբերի 06-ի N 90-Ա որոշման

« Մրգաշենի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների քանակը՝ 8

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքը	Դրույքաչափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ
1	2	3	4	5	6
1	տնօրեն	1	1	100000	100000
2	գեղմասվար	1	0.5	92700	46350
3	հաշվապահ	1	0.5	92700	46350
4	գրադարանավար	1	0.5	92700	46350
5	մշակույթի տան դասատու	1	0.5	92700	46350
6	մշակույթի տան տեխ. աշխատող	1	0.5	92700	46350
7	պահակ	1	0.5	92700	46350
8	հավաքարար	1	0.5	92700	46350
	Ընդամենը	8		748900	424450

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2021 թվականի N 91-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10092021-07-0096 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է՝

Մրգաշեն համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 1/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը 182քմ, ավտոտնակը արտաքին չափերով 132քմ, /ծածկագիր 07-046-0030-0017/ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գոհար Նորիկի Հարությունյանին 746452/ յոթ հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ.Ասատրյան	/		
Զ.Արամյան	/		
Մ.Խաչատրյան	/		
Դ. Հակոբյան	/		
Գ. Մուրադյան	/		
Դ.Նիկողոսյան	/		
Մ. Վարդանյան	/		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2021 թվականի N 92-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 95 հոդվածը՝ Մրգաշեն համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Մրգաշեն համայնքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-046-0114-0016 ծածկագրով 0.5200հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը, որը 25 տարի ժամկետով վարձակալության էր տրված հանգուցյալ Մակբետ Սարգսյանին, շարունակել նրա ժառանգ՝ Զայնիկ Սերգոյի Սարգսյանի հետ՝ առանց պայմանագրի պայմանների փոփոխության:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին Վարձակալ՝ Մակբետ Սարգսյանի ժառանգ՝ Զայնիկ Սարգսյանի հետ կնքել համաձայնագիր վարձակալության պայմանագիրը շարունակելու վերաբերյալ:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ.Ասատրյան	/	/	
Զ.Արամյան	/	/	
Մ.Խաչատրյան	/	/	
Դ. Հակոբյան	/	/	
Գ. Մուրադյան	/	/	
Դ.Նիկողոսյան	/	/	
Մ. Վարդանյան	/	/	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ